ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

02 օգոստոսի 2018 թվականի N 110-Ա

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԵԿՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշման 1-ին կետի «ա» ենթակետով հաստատված N 1 հավելվածի 3-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի ղեկավարի 2018 թվականի մայիսի 10-ի N ՆՋ/10.1/5372-18 գրությունը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի 2018 թվականի հուլիսի 31-ի N 16473-18 զեկուցագիրը՝ **կարգադրում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ ***Վահագն Ոսկանյանին*** 2018 թվականի օգոստոսի 4-ից մինչև օգոստոսի 27-ը ներառյալ՝ 24 օրով, գործուղել Պեկին *(Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն)*՝ կառավարության կողմից կազմակերպվող *«2018 The Belt and Road Countries Seminar on Medical and Health Administration»* թեմայով դասընթացին մասնակցելու համար:

2. ***Վահագն Ոսկանյանի*** գործուղման մեջ գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության գլխավոր մասնագետ ***Ելենա Լյուլինայի*** վրա:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թվականի օգոստոսի 02
ք. Հրազդան